

մոտիվն իր տարբերակային բոլոր դրսևորումներով լավագույնս անդրադարձնում է ժանրային այն առանձնահատկությունները, որոնք մեզ իրավունք են վերապահում այդ և նման ստեղծագործությունները որոշարկելու որպես առանձին ժանր: Իսկ արտաքին, մեծ մասամբ հեքիաթային հնարանների բացահայտումը հնարավորություն է տալիս ի ցույց դնելու այն պատճառները, որոնք շփոթ նմանության դուռ են բացում հեքիաթի ժանրի հետ:

Ռաիսա Խաչատրյան
ՊԱՇՏՄԱՌՈՒՆՔԱՅԻՆ ՏԱՐԵՐԸ ՍՍՍՈՒՆԻ ԵՎ ՏԱՐՈՍԻ
ՊԱՐԵՐԳԵՐԻ ԿՐԿՆԱԳՆԵՐՈՒՄ

1. Կապված լինելով ծիսային արարողությունների հետ, պարերգերն ունեցել են կիրառական-նպատակային նշանակություն՝ ծառայել ին որոշակի ծիսա-հմայական արարողությունների, համադրելով խոսքը երաժշտությանն ու շարժմանը: Դրանցում խորապես արտահայտված են նախնական աշխարհայեցությունն իր տարերայնությամբ, մարդու բնազդական պատկերացումները, նախնական հավատալիքներն ու սովորույթները: Հետզհետե կորցնելով ծիսային բովանդակությունը, պարերգերը ներառել ու պահպանել են համեմատաբար նեղ, կենցաղային տարրեր՝ ստանալով առավելապես սիրային և կենցաղային բնույթ, որպիսի տեսքով էլ հասել են մեզ: Նոր երևույթներն ու հարաբերություններն ավելի արագ են արտացոլվում պարերգերում և դա զաւիս է նրանց իմպրովի-զացիոն բնույթից:

2. Ամենակայունն ու վաղնջակաճը պարերգերի կրկնակներն են: Աղերսվելով նախնական ծեսերի և տոների հետ, կրկնակները անընդհատ կրկնվելով, կատարել են խոսքի հմայական ներգործման ֆունկցիա, հիմքում ունենալով գերբնական ակնկալվող գործության հավատալիք և պաշտամունքային տարրեր: Թալինում վերաբնակեցված սասունցիներից ու մշեցիներից գրաված պարերգերը իրենց տարբերակներով այժմ էլ աչքի են ընկնում ավանդական կայուն գծերով և զեղարվեստական առավել հղկվածությամբ:

3. ,,Նար, Նար, Նարգյուլում,, ,, , , Նարոյ, Նարոյ, Նարոյ ջան,, ,, Նարե, Նարե,, կրկնակները կապված են ջրի պաշտամունքի հետ և անդրադարձնում են Նար- ի և ապա՝ Ծովինար-ի, որպես ջրային ոգու, պաշտամունքը հայերի մեջ: Բազմաթիվ ավանդություններ, հավատալիքների, պաշտամունքային վայրերի տեկայությունը Սա-

սունում և Տարոնում, հավաստում են ջրի պաշտամունքի հետքերը, ընապաշտական ու անիմիստական վերապրուկները ավանդազա այդ հատվածի մեջ:

4. , , Նաներ, Նաներ, , , , Հա Նաներ, Նաներ, , , , Հոյ Նաներ, Նաներ, էդ էլ բըխտի պան էր, , կրկնակները Նանեի պաշտամունքի արձագանքներն են: Նանեն որպես աստվածամայր, , Մեծ մայր, , հանդես է գալիս , , Սասնա ծռեր, , էպոսում՝ ի դեմս Դավթի հովանավոր, խրատատու Նանեի, իսկ վերջինս որպես այդպիսին / մեծ մայր / տակավին այժմ կենցաղավարում է սասունցիների և մշեցիների մեջ:

5. Դերկո-նինա հնագույն ձոներգը նվիրված է եղել Դերկետո /ասորական/ և Նինա /շումերական/ աստվածուհիներին, որոնք լինելով Նույն Ֆունկցիայի կրողներ / սիրո և պողաբերության/, ընկալվել են որպես մի աստվածություն և հանդես են եկել միասին, մի ըսողությամբ անվամբ: Ասորական Դերկետոն պաշտվել է ողջ Հին Արևելքում, ըստ որում, նաև Հայաստանում, սկզբում՝ Աստղիկ և ապա՝ Անահիտ անուններով, որը հավաստում է Աստղիկի թագմաթիվ պաշտամունքային վայրերի առկայությամբ և պաշտամունքի արձագանքներով Տարոնի պարերգերում:

6. Հայաստանի հարավի՝ Սասնո և Տարոնի պարերգերի կրկնակները, որպես պաշտամունքային, ծիսային արարողությունների վերապրուկներ, սեմական աշխարհի հնագույն մշակութային ընդհանրության հեռավոր արձագանքներ են, գերբնական հավատալիքներով նախապաշարված մարդու վաղնջական ըմբռնումներ: